# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Պարմեդ-ն ԱՄԱԲԿ-ԷԱԱՊՁԲ-25/04-2 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 106 | <<Ամիքսան խտանյութ, 1լ >>: Որպես ազդող նյութ պարունակում է Ն,Ն–բիս (3-ամինոպրոպիլ) դոդեցիլամին (3%), ալկիլդիմեթիլբենզիլամոնիումի և ալկիլդիմեթիլէթիլբենզիլամոնիումի քլորիդներ (25%), կոռոզիայի ընկճիչ և այլ բաղադրիչներ:Ախտահանիչ միջոցն օժտված է հակամանրէային ակտիվությամբ տարբեր գրամբացասական և գրամդրական մանրէների նկատմամբ, այդ թվում տուբերկուլոզի և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների, Կանդիդա սնկերի, վիրուսների, նկատմամբ, օժտված է նաև լվացող հատկությամբ: Պիտանելիության ժամկետը արտադրողի փակ տարայում պահելու պայմանում 3 տարի է, աշխատանքային լուծույթինը՝ 14 օր: Ախտահանումից հետո միջոցի աշխատանքային լուծույթը մակերեսների վրայից լվանալու անհրաժեշտություն չկա: 1 լիտր խտանյութից ստացվում է 0,25 %-անոց աշխատանքային լուծույթ, որը չի առաջացնում մետաղների ժանգոտում, չի փչացնում մշակվող մակերեսները, չի գունաթափում գործվածքները՝ 15 րոպե պահաժամով ախտահանումից հետո: Նախատեսված է բժշկական նշանակության արտադրատեսակների (ներառյալ վիրաբուժական և ատամնաբուժական, այդ թվում՝ պտտվող բժշկական նշանակության իրեր, ճկուն և կոշտ էնդոսկոպներ) ախտահանման և նախամանրէազերծման մշակման համար, այդ թվում՝ համակցված մեկ գործընթացում, բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպություններում , այդ թվում՝ մանկական և նեոնատոլոգիական բաժանմունքներում, վարակիչ հիվանդությունների օջախներում սենքերի, կոշտ գույքի, կահավորանքի պարագաների մակերեսների, սարքերի և սարքավորումների, սանիտարա-տեխնիկական սարքավորումների մակերեսների, սպիտակեղենի, սպասքի (այդ թվում՝ լաբորատոր), հիվանդի խնամքի |

| | |
|---|---|
| | պարագաների, մաքրման պարագաների, խաղալիքների, կոշկեղենի, ռետինե գորգերի, սանիտարական փոխադրամիջոցի ախտահանման և լվացման համար մանրէային ծագումնաբանությամբ վարակների ժամանակ: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 10 հունիսի 2016թ., թիվ 1791-Ա: <<Դիասպրեյ ցողացրիչ 750 մլ>> : Պարունակում է 30% իզոպրոպանոլ (պրոպանոլ-2), 0,25% պոլիհեքսամեթիլենբիգուանիդ հիդրոքլորիդ, 0,1 % դիդեցիլդիմեթիլամոնիումի քլորիդ, ֆունկցիոնալ հավելումներ, այդ թվում՝ ջրի կոնդիցիոներ և ապաիոնացված խմելու ջուր: Միջոցը օժտված է հակամանրէային ակտիվությամբ գրամբացասական և գրամդրական մանրէների, այդ թվում՝ տուբերկուլոզի հարուցիչների և ներհիվանդանոցային վարակների հարուցիչների (այսուհետ՝ ՆՀՎ), ախտածին սնկերի՝ դերմատոֆիտիաների և կանդիդոզների հարուցիչների, վիրուսների (ներառյալ ադենովիրուսները, գրիպի, պարագրիպի վիրուսները և սուր շնչական վարակների այլ հարուցիչները, էնտերովիրուսները, ռոտավիրուսները, պոլիոմիելիտի վիրուսը, ընդերային և արտաընդերային հեպատիտների վիրուսները, հերպեսի, մարդու իմունային անբավարարության վիրուսի, ատիպիկ թոքաբորբի, թռչնի գրիպի և այլ վիրուսները) նկատմամբ: Միջոցը արագ չորանում է, օժտված է երկարատև ազդեցությամբ՝ առնվազն երեք ժամ, չի փչացնում և մշակվող մակերեսների վրա չի առաջացնում հետքեր, չի պահանջում լվացում, օժտված է դեզոդորացնող հատկությամբ: Ունի ՀՀ ԱՆ հաստատված մեթոդական հրահանգ՝ առ 20 սեպտեմբերի 2016թ., թիվ 2882-Ա: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Пармед в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԱՄԱԲԿ-ԷԱԱՊՁԲ-25/04-2 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 106 | |